ամէն փորձ աւելորդ համարեցաւ. ուստի միաբանեցաւ Հ. Աղ. Պէշիկթաշլեանի հետ՝ որ այն ատեն Լոնտրա էր, «և այնպէս յանդիման եղեւ ատենի Լորտ Զէնսլէրին, և ետ վկայութիւն, թէ Հրիտակն հօր իւրոյ պատկանի Վենետկեան Մխիթարեանց։ Բայց խորհուրդ ետ պահել զգլուխ դրամոյն միշտ ի Լոնտոն, և տալ միայն ի ձեռս Միաբանութեան զտարեկան շահ նորա. և նա նոյնպէս վճռեաց». (Անդ)։

Ուրեմն, որքան որ Պարոն Աղեքսանդր եղած է «արտակեդրոն ոք» (Անդ), սակայն իբրեւ պարտք արդարութեան պէտք է արձանագրենք, որ ի վերջոյ նա եղած է «հոգեւոր եղբայր և բարերար Միաբանութեանս» (Անդ), որով և արժանի Մեծին Մխիթարայ բոլոր որդւոցս յաւերժական երախտագիտութեան։

2. Վենետկոյ Մեծ Ջրանցքի ամենաշքեղ ապարանքներէն մին է Փեզարոյ պալատը, որուն հիմնարկութիւնը տեղի կ'ունենայ՝ ըստ հնախօսական տուեալներու՝ 1676 թուականին Պաղտասար Լոնկենա ճարտարապետին ծրագրին համաձայն և իր հսկողութեան ներքեւ։ Սակայն երկար տարիներ կիսկատար կը մնայ գործը՝ ճարտարապետին մահուամբ (1682). հուսկ վերսկսելով՝ կ'աւարտի 1710-ին։

Գոհար շէնքիս սեփականատէրն եղած է Փեզարոյ անուն ազնուազարմ ընտանիքը, որ համանուն քաղաքէն Վենետիկ փոխադրուած է 1225-ին։ Իրմէ սերած է նաեւ Ճիովաննի Փեզարոյ Տոժը (ընտր. 1658-ին)։ Այս նշանաւոր ընտանիքը ուրիշ պանծալի յուշարձաններ ալ թողած է Վենետկոյ մէջ. զոր օր. վերաշինած է S. Giovanni Decollato եկեղեցին ու կանգնած է զանազան պալատներ, իսկ Frari-ի եկեղեցւոյն մէջ՝ հրաշալի խորան մը և պերճ շիրիմներ, և այլն։

Փեզարոյ պալատին մէջ ապաստան գտած է նաեւ Վենետկոյ վերջին Տոժը Լոտովիգոյ Մանին՝ (1726 – ընտր. 1789–1802) իշխանութենէ գահազուրկ ըլլալէ վերջ։ Այս փառաւոր շէնքը Փեզարոյ ընտանիքէն ժառանգութեամբ կ'անցնի Կրատենիկոներուն, որոնցմէ վարձու կը ստանայ Միաբանութիւնս Ռափայէլեան Վարժարանի համար. (տես Giulio Lorenzetti: Venezia e il suo restauro, էջ՝ 616. և Giuseppe Tassini: Curiosità Veneziane, 1915, էջ 496)։

Դպրոցիս պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ 1836 Սեպտեմբեր 11-ին։

Հետեւելով վանքիս Արձանագրութեանց՝ Խնամակալաց ժողովը 11 տարիներ վերջ 1847 Սեպտ. 12-ին մեծ մտահոգութեան մը կը մատնուի. Փեզարոյ պալատը վաճառուելու հարց մը կ'ելլէ մէջտեղ «210,000 կամ եւս աւելի աւստրիական լիրայից», որուն համար ժողովականք Նիստի կը հրաւիրուին, ուր կ'առաջարկուի Ռափ. վարժարանին համար – ըստ այլ Օրագրական Շարքի մը (1847-ի) – «կամ առնուլ երկիր ի Ճուտէքքա և անդ նորոգ շինել, կամ որոնել ի Վենետիկ, կամ գնել զտունն յորում եմք» կ'ըսէ։ Ճուտէքքայի մտածութիւնը ընդդիմութեան բաղխելով՝ կը դիմուի այս հարցման. «ապա գնեսցո՞ւք զպալատ Փեզարոյի թէ ոչ. և 6 այո և 3 ոչ» կ'ելլէ պատասխանը, իսկ ըստ վերոյիշեալ Արձանագրութեան՝ մէկ քուէի առաւելութեամբ է որ գնել կ'որոշուի։ Այս որոշման տեղի չունենալուն պատճառը թերեւս պահանջուած գումարը կամ պայմաններն են որ անընդունելի կ'ընեն, և կամ այն շարժառիթը՝ որով անկէ 3 տարի յետոյ Վարժարանը Զենոբիոյ պալատը կը ստիպուի փոխադրուիլ։ Ցամենայն դէպս՝ կ'երեւի թէ յետոյ յարմարութեան մը կուգան պալատին տիրոջ հետ՝ Ռափ. Վարժարանը դարձեալ հոն վարձու մնալու, որովհետեւ նոյն Օրագրական Շարքին մէջ թռուցիկ թղթի մը վրայ, թէեւ անստորագիր, գրուած է հետեւեալը. «Io sottoscritto confermo tutti i patti dei quali ci siamo convenuti coll'Ill.mo Sig. Conte Leonardo Gradenigo intorno al Palazzo Pesaro, intendo di comprendervi anche la riscossione di quanto fu antecipato pel restauro delle finestre. E nello stesso tempo prometto di consegnare il sopradetto palazzo ai 10 Marzo 1848, spoglio di quanto appartien alla razione del Collegio Armeno, il quale presentemente vi si è allogiato ». – (Թարգմանութիւնն է) «Ստորագրեալս կը հաստատեմ բոլոր պայմանները՝ որոնց մասին համաձայնեցանք Մեծ. Պ. Կոմս Կրատենիկոյի հետ՝ Փեզարոյ պալատին շուրջ, որոնց մէջ կը պարունակուի նաեւ գանձումը՝ պատուհաններու նորոգման համար կանխիկ վճարած գումարին։ Միեւնոյն ժամանակ կը խոստանամ 10 Մարտ 1848ին վերոյիշեալ պալատը յանձնել, պարպուած բոլոր կահկարասիներէ որ Հայոց Դպրոցին կը պատկանի, որ և ներկայիս հոն հաստատուած է»։

3. Հ. Սարգսի Ռափ. Վարժ.ի տեսչութիւնը կարեւոր է չորսի բաժնել. Ա. Ուղղակի շրջան,